ՀԻՄԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ

Որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն: Նախագիծը մշակելիս հաշվի է առնվել 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ բյուջեի մնացորդների մասին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի կողմից տրված տեղեկանքը:

Սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2023 թվականի բյուջեն՝ համաձայն 1-6 հավելվածների,

1. եկամուտների գծով՝ 2,230,736.600 /երկու միլիարդ երկու հարյուր երեսուն միլիոն յոթ հարյուր երեսունվեց հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ, որից՝

սեփական եկամուտներ 724,466.000 /յոթ հարյուր քսանչորս միլիոն չորս հարյուր վաթսունվեց հազար / ՀՀ դրամ:

2. Ծախսերի գծով՝ 2,345,440.931 /երկու միլիարդ երեք հարյուր քառասունհինգ միլիոն չորս հարյուր քառասուն հազար ինն հարյուր երեսունմեկ/ ՀՀ դրամ:

3. Դիֆիցիտը (պակասուրդը)՝ 114,704.331 /մեկ հարյուր տասնչորս միլիոն յոթ հարյուր չորս հազար երեք հարյուր երեսունմեկ/ ՀՀ դրամ:

4. Համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 113,897.146 ՀՀ դրամ, իսկ ֆոնդային մասի տարեսկզբի մնացորդը՝ 807.185 ՀՀ դրամ: Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից 4,116.200 ՀՀ դրամը ուղղվել է վարչական բյուջեի նախորդ 2022 թվականի պարտքերի մարմանը, իսկ 109,780.946 ՀՀ դրամը՝ ֆոնդային բյուջե: Ֆոնդային բյուջեի տարասկզբի ազատ մնացորդը կազմում է ընդամենը 110,588.131 ՀՀ դրամ, որից 75,529.263 ՀՀ դրամը ուղղել նախորդ տարվա պարտքերի ֆինանսավորմանը, իսկ մնացած 35.058.868 ՀՀ դրամը, վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը՝ 441,000.000 ՀՀ դրամ ողղել 2023 թվականի համար պլանավորված կապիտալ ծախսերի ֆինանսավորմանը:

5. Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդը սահմանել 445,000.000 ՀՀ դրամ, որից վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը՝ 441,000.000 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.Ե. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ